




### Գ. Կիրակի Չկնի Յայտնութեան



#### ԺԱՄԱՄՈՒՏ

Միածին Որդի եւ Աստուծոյ Խօսք, եւ անմահ՝ Եութիւն, որ յանձն առիր մարմնանալ սուրբ եւ միշտ կոյս Աստուածածինէն, անփոփոխելիդ՝ մարդ դառնալով խաչուեցար, Զրիստո՛ս Աստուած եւ մահովդ՝ մահը խորտակեցիր. մին անձերէն՝ Ամենասուրբ Երրորդութեան, արժանի փառքի՝ Յօր եւ Յոգւոյն հետ փրկե՛ մեզ:

#### ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԳԿ.

Քու աստուածութեանդ լոյսով, Զրիստոս, լուսաւորեցիր սուրբ Եկեղեցին. անշարժ պահէ զայն յաւիտեան:

Այսօր Երուսաղէմը կը տօնէ հաւատացեալներու բազմութեան հետ Սուրբ Եկեղեցւոյ նաւակատիքը, անշարժ պահէ զայն յաւիտեան:

Բացուեցան նոր Սիոնի հաւատքի դռները, առագաստին մէջ ընդունելու անմահ Փեսաղ, անշարժ պահէ զայն յաւիտեան:

## ՄԵՍԵՂԻ (Սղմ. 64, 2 եւ 3)


Աստուած իմ, Սիոնի վրայ կատարուած փառաբանութիւնը միայն քեզի կը պայելէ եւ Երուսաղէմի մէջ քեզի աղօթքներ թող բարձրանան:

Աղօթքներս լսէ՛, եւ ամէն մարմնաւոր եակ՝ քեզի թո՛ղ գայ, քեզի թո՛ղ դիմէ:

## ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ՊԱՅՔԱՐԻԼ ԱՄԵՏԱՐԱՆԻՆ ՅԱՄԱՐ

**Պօղոս Առաքեալին Տիմոթէոսի ուղղած Երկրորդ Թուղթն Է ընթերցուածը.  
(2. Տիմ. 1, 1-9)**

Պօղոս, Աստուծոյ կամքով առաքեալ Յիսուս Զրիստոսի, ըստ կեանքի խոստումին՝ Յիսուս Զրիստոսի, Տիմոթէոսի մեր սիրելի որդիին: Շնորհք, ողորմութիւն եւ խաղաղութիւն, Հօր Աստուծոյ եւ մեր Տիրոջ Յիսուս Զրիստոսի կողմէ: Գոհութիւն կը մատուցանեմ Աստուծոյ, զոր կը պաշտեմ մաքուր խիղճով՝ հետեւելով իմ նախնիքներու, երբ անդադար, գիշեր ցերեկ, քեզ կը յիշեմ աղօթքներու մէջ: Միտքս բերելով քու արցունքներդ, սաստիկ բաղձանքը կ'ունենամ քեզ տեսնելու եւ ուրախութեամբ համակելու: Կը յիշեմ անշեղ հաւատքը, որ կայ քու մէջդ, որ նախապէս կար քու մեծ մօրդ, Լաւոդիայի, ինչպէս նաեւ մօրդ՝ Եւնիկէի սրտին մէջ եւ համոզուած եմ, թէ կը մնայ նաեւ քու սրտիդ մէջ: Ասոր համար կը յիշեցնեմ քեզի, որ արծարծես Աստուծոյ շնորհքը, որ տրուեցաւ քեզի իմ ձեռնադրութեամբս: Աստուած վախի հոգի մը չտուաւ մեզի, այլ՝ հոգին զօրութեան, սիրոյ, զգաստութեան: Այսուհետեւ ուրեմն, վկայութիւնը մեր Տիրոջ Յիսուս Զրիստոսի, եւ զիս՝ անոր կալանաւորը, քեզի ամօթ մի՛ համարեր, այլ՝ մասնակից եղի՛ր Աւետարանին համար



կրած չարչարանքներու, ըստ Աստուծոյ զօրութեան, որ փրկեց մեզ եւ կանչեց սուրբ կոչումով, ո՛չ մեր գործերուն համաձայն, այլ՝ իր հաճութեան եւ շնորհքին համաձայն, որ ի յաւիտենից մեզի տըրւեցաւ Յիսուս Զրիստոսի միջոցաւ:

### **Ալելուիա, Ալելուիա,**

Եկէ՛ք, եւ Աստուծոյ գործերը տեսէք, թէ որքան աներեւակայելի իմաստութեամբ եւ խելացի կերպով ծրագրուած են անոնք, եթէ մարդոց գործերուն հետ համեմատելու ելլենք:

**(Սղմ. 65, 5)**

**Ալելուիա:**

## ԱՒԵՏԱՐԱՆ

### ՅԻՍՈՒՍ ՀՈԳԻ Է (Յուվհ. 4, 24-42)

«Աստուած հոգի է. եւ երկրպագողները պետք է զինք պաշտեն Հոգիով եւ ճշմարտութեամբ»:

Կինն ըսաւ. «Գիտեմ թէ Մեսիան պիտի գայ. ան, որ Քրիստոս կը կոչեն: Երբ գայ՝ ամէն բան պիտի յայտնէ մեզի»: Յիսուս ըսաւ. «Ես եմ, որ քեզի կը խօսիմ»:

Նոյն ժամուն աշակերտները հասան եւ զարմացան, որ կնոջ մը հետ կը խօսէր, բայց ո՛չ ոք համարձակեցաւ ըսել, թէ ի՞նչ կ'ուզես անկէ, կամ ինչո՞ւ հետը կը խօսիս: Կինը թողուց կուժը, վազեց քաղաք եւ ըսաւ մարդոց. «Եկե՛ք, տեսէք, մարդ մը, որ ինձի ըսաւ ինչ որ ըրած եմ. արդեօք ա՞ն է Քրիստոսը»:

Ելան քաղաքէն եւ Յիսուսի քով եկան: Մինչ այն, աշակերտները կ'աղաչէին Յիսուսի եւ կ'ըսէին. «Ռաբբի, կերակուր կեր»: Յիսուս ըսաւ անոնց. «Ես ունիմ ուտելիք կերակուր մը, զոր դուք չէք գիտեր»:

Աշակերտները իրարու կ'ըսէին. «Արդե՞օք մէկը կերակուր բերաւ իրեն»: «Իմ կերակուրս է, պատասխանեց Յիսուս, կատարել կամքը եւ ընել գործերն Ասոր, որ զիս դրկեց: Դուք չէ՞ք ըսեր, թէ չորս ամիսէն հունձքը կը հասնի: Ես կ'ըսեմ ձեզի, բարձրացուցէ՛ք ձեր աչքերը եւ տեսէ՛ք դաշտերը, որոնք սպիտակացած են հունձքի համար: Հնձողը իր վարձքը կ'առնէ եւ պտուղ կը հաւաքէ յաւիտենա-



կան կեանքի համար եւ թէ՛ սերմանողը, թէ՛ հնձողը միասին կ'ուրախանան: Ծշմարիտ է առածը, որ կ'ըսէ. 'Մէկը կը սերմանէ, ուրիշ մը կը հնձէ': Ես դրկեցի ձեզ հնձել հոն, ուր վաստակ չունէիք: Ուրիշներ վաստակեցան եւ դուք անոնց վաստակին պտուղը ժառանգեցիք»:

Այն քաղաքին Սամարացիներէն շատեր հաւատացին Յիսուսի, կնոջ խօսքին համար, որով վկայեց, թէ ըսաւ ինձի ամէն բան, որ ես ըրած եմ: Իսկ երբ Յիսուսի մօտ եկան՝ աղաչեցին, որ իրենց քով մնայ, Յիսուս երկու օր մնաց այն քաղաքը: Եւ դեռ շատեր հաւատացին իր խօսքերուն պատճառով եւ կ'ըսէին կնոջ. «Այսուհետեւ քու խօսքերուդ համար չէ որ կը հաւատանք, այլ, որովհետեւ մենք անձամբ լսեցինք անկէ եւ ստուգապէս գիտեսք, թէ ինքն է աշխարհի Փրկիչը»:

## ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ

### Գ. Կիրակի Յայտնութեան

«Իմ Կերակուրս է կատարել կամքը եւ ընել գործերն Ասոր որ զիս դրկեց»

Յիսուսի շրթներէն արտասանուած այս հոգեգմայլ բառերը իրենց մէջ կը բովանդակեն աստուածային այնպիսի ճշմարտութիւն մը, որուն ընկալումով, իրաքանչիւր քրիստոնեայ Աստուծոյ

ներկայութիւնը առաւել կերպով կը զգայ ու գայն կ'ապրի իր առօրեային մէջ:

Յիսուս Քրիստոս իր մահկանացու կեանքի ընթացքին, ուրիշ բան չ'ըրաւ եթէ ոչ՝ կատարել իր Երկնաւոր Հօր կամքը: Աշակերտները աղաչեցին Յի-

տուսին ըսելով. «Ռաբբի, կերակուր կեր»: Յիսուս անոնց պատասխանեց. «Ես կերակուր մը ունիմ գոր դուք չէք գիտեր: Իմ կերակուրս է կատարել կամքը եւ ընել գործերն Անոր որ գիս դրկեց»:

Քրիստոսի սնունդը՝ աշխարհի փրկութիւնն է: Յիսուս աշխարհ չի դրկուեցաւ իր անձին մասին վկայելու, այլ՝ Աստուծոյ հրաշագործութիւնները յայտնելու: Ան երբեք իր փառքը չփնտմեց. չփնտմեց ո՛չ հարստութիւն, ո՛չ պատիւ եւ ո՛չ ալ բարձր դիրք, այլ փառքն Աստուծոյ, այսինքն՝ ժողովուրդին փրկութիւնը. «Ես չեմ եկած աշխարհը դատելու, այլ զայն փրկելու» կ'ըսէ Ան: Բոլորս քաջածանօթ ենք այն տարբերութեան որ կայ «դատել» եւ «փրկել» բայերուն միջեւ, ոչ միայն լեզուական առումով, այլ նաեւ հաւատքի ըմբռնումով: Դատել կը նշանակէ մեկուն յանցանքները քննել, արդարութիւնը վճռել, անիրաւը դատաստանի ենթարկել: Մինչդեռ փրկելու մէջ կայ սեր, կայ գոհողութիւն, մէկ խօսքով՝ կայ մահ:

Յիսուս աշխարհ եկաւ վկայելու Աստուծոյ արդարութեան մասին: Մարդոց հանդէպ Աստուծոյ անհուն սիրոյ մասին վկայելու, մանաւանդ՝ հիւանդներուն, տկարներուն եւ անկեալներուն:

Քրիստոսով Աստուած ինքզինք կը յայտնէ: Աստուածորդիով աստուածային յայտնութիւնը իր կատարելութիւնը կը գտնէ: Պօղոս առաքեալ Կողոսացիներուն ուղղած նամակին մէջ կ'ըսէ. «Քրիստոս Ինք՝ տեսանելի պատկերն է աներեւոյթ Աստուծոյ... Որովհետեւ Զայրը ուզեց, որ Քրիստոս իր մէջ ունենայ աստուածային բնութեան լրումը»:

Այսօր մենք եւս կոչուած ենք ճանչնալու Քրիստոսը եւ անոր վարդապետութիւնը, որ նոյնինքն Աստուծոյ վարդապետութիւնն է: Մտածեք Քրիստոսի մասին. երթանք իրեն իր Աւետարանի խօսքերուն ընդմէջէն զգալու հա-



մար քաղցրութիւնը իր ներկայութեան:

Երանի անոնց, որոնք միշտ Աստուծոյ կամքին հիւսնազանդ են, որովհետեւ սրտի խաղաղութիւն կը վայելեն, հոգեպէս կը մխիթարուին ու փութով սրբութեան եւ կատարելութեան կը հասնին:

Ուրախալի առիթներուն եւ կեանքի ասպարեզի մէջ յաջողութեան պարագաներուն մէջ դիւրին է ըսելը. «Օրինեալ ըլլայ Աստուծոյ կամքը»: Սակայն նոյնը ըսելու եւս նաեւ դժբախտութիւններու եւ անյաջողութիւններու ժամանակ, որովհետեւ առանց Աստուծոյ կամքին ոչ մէկ բան չի պատահիր երկրի վրայ. «Ձեր գլխուն մագերն անգամ համրուած են» կ'ըսէ Տէրը:

Մեր մաղթանքն է որ Յիսուսին խօսքերը ուղղուած աշակերտներուն արձագանգեն մեզմէ իւրաքանչիւրին մտքին ու սրտին մէջ, որպէսզի կարենանք օր մը հաւատքով ու խոր համոզումով Յիսուսի պէս արտայայտուիլ ըսելով. «այսինչ գործը կը կատարեմ, ոչ իմ փառքիս, այլ՝ Աստուծոյ, որուն միայն ու միայն կը վայելէ փառքը, իշխանութիւնը եւ պատիւը, այսօր եւ միշտ, ամէն: